

Մարտ 9-ին հրովարտակ մը շնորհեց անոնց, հաստատելով հին արտօնութիւնները եւ նորեր աւելցնելով. այդ հրովարտակին մէջ տեղացիներուն կ'արգիլէ հայ վաճառականներուն սուղ գինով վարձու տալ հոգերը, եւ մերձակայ հոգերու տէրերուն հետ խորամանկութիւն սարքելով նեղել կամ վանել հայերը, անոնց հոգերուն վրայ ցանել եւ հնձել: Իսկ հայերուն կը շնորհէ իրենց դատած տեղը անասուններու խոտ գնելու իրաւունքը: Կանոններ կը սահմանէ իւրաքանչիւր արջառի, ձիու եւ խոզի փոխարէն անոնց վճարելիք տուրքին մասին. տեղացիներուն կ'արգիլէ անոնց ձիերը գրաւել սուրհանգակներու գործածութեան համար, եւ դատերու պարագային իրաւունք կուտայ անոնց Իսփռավնիքի (դաւառապետ) վճարին դէմ բողոքել իշխանական ատեանին. դարձեալ կը սահմանէ որ եթէ Իսփռավնիքը յանցաւոր գտնէ՝ դանոնք չկարենայ պատժել, այլ ստիպուած ըլլայ իշխանական ատեանին զրկել»:

* * *

Սուչովայէն յետոյ պօթօջանն է եղած հայ առեւտրականներու գլխաւոր կայանը: Աւելին գրեթէ հայ առեւտրականներն են որ շէնցուցած են քաղաքը: Ու իրենց այդ հանգամանքով տիրական զիրք ունեցած են քաղաքին ու շրջականներուն մէջ՝ սիրուած, մեծապէս, երկրին իշխաններէն ու ժողովուրդէն: Յոյց տալու համար թէ հայերը ինչպէս կը կազմէին քաղաքին բաղկացուցիչ գլխաւոր տարրերէն մէկը, ուսմէն յայտնի պատմարան Հաշտեու կը ներկայացնէ (Arch. Ist. No. 1. էջ 21) 1670-ին Պօթօջանի մէջ տեղւոյն հասարակութեան կողմէ տրուած վկայական մը որ սապէս կը սկսի.

«Մենք, Պօթօջան քաղաքին ուսմէն եւ հայ քաղքենիներս կը վկայենք սոյն մեր գրութեամբ, եւ այլն»...

Պրոֆ. Եօնկա, որ ինքն ալ Պօթօջանցի է, եւ մօտէն ուսումնասիրած է ուսմանահայ դպրութիւն անցեալը, մանաւանդ Պօթօջանիւնը, կ'ըսէ իր Պօթօջանեան Արձանագրութիւնի գործին (Inscriptii Botosonene, 1905, Bucaresti) յառաջարանին մէջ:

«1530-ին հայ դպրութ մը արդէն լաւ կազմակերպուած կը գտնենք Պօթօջանի մէջ, որովհետեւ տօնավաճառի քաղաք մըն էր Պօթօ-

ջանը, եւ Մոլտովայի մէջ տօնավաճառի վայր մը առանց հայու կարելի չէր ըմբռնել այն ատեն»:

Պրոֆ. Եօնկա, ուրիշ տեղ մը (O Paralela Istorică, էջ '2)՝ Պօթօջանի հայոց մասին խօսելով կ'ըսէ.

«Հայ վաճառականները, մինչեւ Պօթօջանի 1819-ի մասնակի ինքնավարութեան առանձնաշնորհումը եւ անկէ յետոյ ալ, մաս կը կազմէին Պօթօջանի վաճառականութեան ազգային խմբաւորութեանց: Պայքարի մէջ մոլտովական արհեստակցութիւններէն ոմանց՝ ինչպէս մուշտակավաճառներու արհեստակցութեան հետ, հայերը կը պահէին իրենց սովորական իրաւունքը վաճառելու մետաքսեղէններ, եւ այլն»:

Փրոֆ. Եօնկա 1906 Ապրիլ 16-ին Պօթօջան ըրած իր մէկ բանախօսութեան մէջ, խօսելով Պօթօջանի առեւտուրի պատմութեանը վրայ, դովեստը ըրած է հայ վաճառականներուն, որոնց, ըսած է, պէտք է շնորհակալ ըլլանք. «Հայերը գալով օսմանեան երկիրներէն կամ Կալիցիոյ կողմերէն, երբ իրենց եկեղեցիները կը կառուցանէին՝ կը շինէին նաեւ խանութներ, ուրիշ քրիստոնեայ առեւտրականներու կողքին, ուսմէն եւ քիչ թիւով յոյն: Եւ թէ եւ անոնք գոհ կ'ըլլային պատուով վաստակուած շահով, այնուամենայնիւ ենթակայ էին սեղմումներու:

«167* թուակիր իշխանական հրովարտակի մը մէջ յիշուած են ուսմէն քաղքենիներու կարգին եւ հայ քաղքենիները, որոնք իրենց նմանիքը ունէին: Երբեմն նմանիքը նոյնիսկ վօրնիքի (գերագոյն դատաւոր) տեղը կը բռնէր: Եւ ահա երեւան կուզան հրէաները, նախապէս գալով սեղմ թիւով Պոլսէն, — սիւանեօլ հրէաները: Յետոյ կուզան մեծ թիւով, մանաւանդ Պուրովինայի գրաւումէն յետոյ: Կ'անհետանայ հայոց մանր առեւտուրը: Անոնք այլեւս կը գրադին արջառի արտածութեամբ դէպի Պուրովինա, կամ կապալով վերցուած ջաղացքներ բանեցնելով: Անոնց տեղը կուզան հրէաները գրաւել, մանրավաճառ, վաճառով ամէն բան»:

* * *

Ռոմանի հայերը, կ'ըսէ Փրոֆ. Եօնկա